ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

**Հայաստանի Հանրապետության
2017 թ. խոշորացվող համայնքների
վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների**

# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

**համայնք**

**(Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան բնակավայրեր)**

**Հեղինակ՝ Միեր Հակոբյան**

**Երևան – 2017**




# ՋԱՐԵՆՑԱՎԱՆ
## համայնքը՝ հպանցիկ

**Վարչական տարածքը՝** 29 705 հա

**Բնակչությունը՝** 39 454 մարդ

**Մարզը՝** Կոտայք

**Համայնքի կենտրոնը՝** Ջարենցավան

**Բնակավայրերը՝** Ջարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Կոտայքի մարզի Ջարենցավան խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 1 քաղաքային՝ Ջարենցավան (համայնքի կենտրոն), և 5 գյուղական բնակավայր՝ Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Կոտայքի մարզի կենտրոնական հատվածում և մոտ են գտնվում Արագածոտնի մարզին: Բնակավայրերի գոտիականությունը լեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 1350-1800 մետրի սահմաններում: Համայնքի կենտրոն Ջարենցավանը գտնվում է 1600 մետր բարձրության վրա: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **29 705** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Արզականն է (8463 հա), ամենափոքրը՝ Կարենիսը (893 հա): Համայնքի կենտրոն Ջարենցավանն այս չափանիշով 3-րդն է (5570 հա):

### Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **39 454** մարդ: Բնակչությամբ ամենամեծ բնակավայրը Ջարենցավանն է (29 257 մարդ) /առնվազն 10 անգամ գերազանցում է մյուս բնակավայրերին/, իսկ ամենափոքրը՝ Կարենիսը (856 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 132.63 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Ջարենցավանն է (525.26 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Ֆանտանը (23.74 մարդ/կմ$^2$): Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Չարենցավան խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ$^2$) |
|---|---|---|---|---|
| 1 | **Չարենցավան** | 5570 | 29257 | 525.26 |
| 2 | Ալափարս | 3279 | 2454 | 74.84 |
| 3 | Արզական | 8463 | 2899 | 34.25 |
| 4 | Բջնի | 6962 | 2910 | 41.80 |
| 5 | Կարենիս | 893 | 856 | 95.86 |
| 6 | Ֆանտան | 4538 | 1078 | 23.75 |
| | **Ընդամենը /միջինը/** | **29 705** | **39 454** | **132.63** |

**Քարտեզ 1.** Չարենցավան համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի




## Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը

Համայնքի կենտրոն Չարենցավանը գտնվում է Ալափարսից, Կարենիսից ու Ֆանտանից 4-6 կմ, իսկ Արզականից ու Բջնիից՝ 10-14 կմ հեռավորության վրա: Մյուս բնակավայրերից Չարենցավան հասնելու համար պահանջվող միջին ժամանակը 12 րոպե է: Չարենցավանը, Ալափարսն ու Կարենիսը տեղակայված են H-7, Ֆանտանը՝ H-1, Բջնին՝ H-5 հանրապետական նշանակության ճանապարհների վրա, իսկ Արզականով անցնում են միաժամանակ H-5 և H-7 ճանապարհները:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում, սակայն շնորհիվ աշխարհագրական դիրքի՝ բոլորում գործում են միջհամայնքային երթուղիներ: Չարենցավանից գործում են կանոնավոր երթուղիներ դեպի Երևան, Հրազդան, ինչպես նաև համայնքի մյուս 5 բնակավայրերը: Ալափարսից և Բջնիից օրական 3 անգամ գործում են երթուղիներ դեպի Հրազդան: Արզականից և Բջնիից համապատասխանաբար 3 ժամը մեկ և օրական 2 անգամ կատարվում են ուղևորափոխադրումներ դեպի Երևան:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Չարենցավան համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանապարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Չարենցավան** | 74 | - | - | 0 |
| Ալափարս | 20 | 6 | 10 | 0 |
| Արզական | 12 | 10.3 | 13 | 0 |
| Բջնի | 16 | 14.3 | 21 | 0 |
| Կարենիս | 7 | 4 | 8 | 0 |
| Ֆանտան | 3 | 4.8 | 8 | 0 |
| **Միջինը** | **22** | **7.88** | **12** | **0** |

Բոլոր բնակավայրերի ավտոճանապարհները հիմնականում հողային են և վերանորոգման կարիք ունեն: Չարենցավանում, Ալափարսում և Արզականում դեռևս պահպանվել են որոշ ասֆալտապատ հատվածներ, սակայն դրանք էլ օգտագործման պիտանի չեն:

Չարենցավանի հեռավորությունը մարզկենտրոն Հրազդանից 21.5 կմ է:

## Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը[1]

Չարենցավանում, Ալափարսում, Բջնիում և Կարենիսում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից, իսկ Արզականում՝ ՏԻՄ-ի: Նշված հինգ բնակավայրերում ջրամատակարարման գրաֆիկը շուրջօրյա է, իսկ սակագինը տատանվում է 150-180 դր. մեկ խմ համար: Արզականում խմելու ջուրը տրամադրվում է օրական 3-7 ժամ՝ անվճար: Չարենցավանում, Բջնիում և Կարենիսում խմելու ջրի խողովակաշարերը արդիականացվել են վերջին տարիների ընթացքում և գտնվում են բավարար վիճակում: Ալափարսում 2008 թ. ներքին

[1] Ֆանտան բնակավայրում խմելու ու ոռոգման ջրամատակարարման և աղբահանության վերաբերյալ տվյալները բացակայում են:

ցանցի մեծ մասը փոխվել է, սակայն դեռևս մասնակի նորոգման անհրաժեշտություն կա, իսկ Արզականում ողջ խողովակաշարը հիմնանորոգման կարիք ունի:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3**. Չարենցավան համայնքում խմելու ջրի մատակարարումը

| Բնակավայր | Ջրամատակարարման կառավարողը | Ջրամատակարարման ժամակարգը | Սակագինը (1 $մ^3$) | Խողովակաշարի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| **Չարենցավան** | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | բավարար |
| Ալափարս | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 150 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Արզական | ՏԻՄ | 3-7 ժամ | անվճար | հիմնանորոգման կարիք |
| Բջնի | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 153 դր. | բավարար |
| Կարենիս[2] | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 155 դր. | բավարար |
| Ֆանտան | - | - | - | - |

Ոռոգման համակարգ առկա է բոլոր բնակավայրերում, սակայն ոչ բոլորն են լիարժեքորեն պիտանի օգտագործման համար: Չարենցավանում, Ալափարսում և Արզականում ոռոգման ներքին ցանցը երկար ժամանակ է՝ չի վերանորոգվել, և ջրի կորուստները գերազանցում են 50%-ը: Բջնիում ոռոգման համակարգը գտնվում է բավարար վիճակում, իսկ ցանցում կորուստները աննշան են: Կարենիսում համակարգը ևս բավարար վիճակում է, և մեկ հատվածն է միայն անհրաժեշտ նորոգել. ջրի կորուստներ գրեթե չեն լինում:

Աղբահանությունը համայնքում կատարվում է կենտրոնացված եղանակով՝ պայմանագրային հիմունքներով: Չարենցավանում այն իրականացվում է երկու օրը մեկ, իսկ աղբը տեղափոխվում է Ալափարսի վարչական տարածքում գտնվող բաց աղբավայր: Ալափարսում աղբահանությունն իրականացվում է ամեն օր, Արզականում՝ շաբաթը երկու անգամ, իսկ Բջնիում և Կարենիսում՝ շաբաթը մեկ անգամ:

Համայնքում աղբահանության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4.** Չարենցավան համայնքի աղբահանությունը

| Բնակավայր | Իրականացման եղանակը | Հաճախականությունը | Սակագինը (1 անձը) | Աղբամանների առկայությունը |
|---|---|---|---|---|
| **Չարենցավան** | կենտրոնացված | երկու օրը մեկ | 200 դր. | 380 |
| Ալափարս | կենտրոնացված | ամեն օր | 50 դր. | - |
| Արզական | կենտրոնացված | շաբաթը երկու անգամ | 60 դր. | 27 |
| Բջնի | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | 70 դր. | 18 |
| Կարենիս | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | 100 դր. | - |
| Ֆանտան | - | - | - | - |

[2] Կարենիսի մեկ թաղամասում խմելու ջուր չի մատակարարվում՝ ենթակառուցվածքների բացակայության պատճառով:

**Կրթական հաստատությունները**

Համայնքում գործում է 24 կրթական հաստատություն, որոնցից 8-ը մանկապարտեզներ են (հինգը գտնվում են Չարենցավանում), 5՝ հիմնական (բոլորը՝ արենցավանում), 5-ը՝ միջնակարգ (մեկական՝ յուրաքանչյուր բնակավայրում), 1-ը՝ ավագ, 1-ը՝ երաժշտական, 3-ը՝ գեղարվեստի և 1-ը՝ մարզական դպրոցներ են (աղյուսակ 5):

**Աղյուսակ 5.** Չարենցավան համայնքում առկա կրթական հաստատությունները

| **Բնակավայր** | Մանկապարտեզ (հաճախողների թվով) | Հիմնական դպրոց (հաճախողների թվով) | Միջնակարգ դպրոց (հաճախողների թվով) | Ավագ դպրոց (հաճախողների թվով) | Երաժշտական դպրոց (հաճախողների թվով) | Գեղարվեստի դպրոց (հաճախողների թվով) | Մարզադպրոց (հաճախողների թվով) |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Չարենցավան** | 1 (280) | 1 (464) | - | 1 (413) | 1 (355) | 1 (595) | 1 (436) |
| | 1 (125) | 1 (760) | | | | | |
| | 1 (130) | 1 (557) | | | | | |
| | 1 (320) | 1 (491) | | | | | |
| | 1 (90) | 1 (395) | | | | | |
| Ալափարս | 1 (70) | - | 1 (270) | - | - | - | - |
| Արզական | 1 (65) | - | 1 (310) | - | - | 1 (90) | - |
| Բջնի | 1 (105) | - | 1 (280) | - | - | 1 (100) | - |
| Կարենիս | - | - | 1 (68) | - | - | - | - |
| Ֆանտան | - | - | 1 (151) | - | - | - | - |
| **Ընդամենը** | **8** | **5** | **5** | **1** | **1** | **3** | **1** |

Չարենցավանի հինգ մանկապարտեզներից միայն մեկն է գտնվում բավարար վիճակում, երկուսը՝ մասնակի, ևս երկուսը՝ հիմնական նորոգման կարիք ունեն: Ալափարսի, Արզականի ու Բջնիի մանկապարտեզներն ընթացիկ նորոգման կարիք ունեն: Չարենցավանի բոլոր հիմնական դպրոցները, ավագ դպրոցը, ինչպես նաև մարզադպրոցը գտնվում են բավարար վիճակում: Բջնիի և Կարենիսի միջնակարգ դպրոցները հիմնանորոգման կարիք ունեն, իսկ Ալափարսի, Արզականի և Ֆանտանի դպրոցները գտնվում են բավարար վիճակում: Չարենցավանի երաժշտական դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Չարենցավանի և Բջնիի գեղարվեստի դպրոցների վիճակը բավարար է, իսկ Արզականի գեղարվեստի դպրոցը ընթացիկ նորոգման կարիք ունի: Աշակերտների քանակով ամենամեծը Չարենցավանի հիմնական դպրոցներից մեկն է (760 աշակերտ), ամենափոքրը՝ Կարենիսի միջնակարգ դպրոցը (68 աշակերտ):

**Առողջապահական հաստատությունները**

Համայնքում գործում է երկու բուժկետ Կարենիսում և Ֆանտանում, երեք բուժամբուլատորիա Ալափարսում, Արզականում և Բջնիում, մեկ պոլիկլինիկա, մեկ հիվանդանոց՝ նախատեսված 35 հիվանդի համար, Չարենցավանում, և 16 դեղատուն, որոնցից 14-ը՝ Չարենցավանում, մեկական՝ Արզականում և Բջնիում: Երկու բուժկետերը գտնվում են բավարար վիճակում: Չարենցավանի պոլիկլինիկան ու հիվանդանոցը, ինչպես նաև Ալափարսի և Արզականի բուժամբուլատորիաներն ունեն ընթացիկ, իսկ Բջնու բուժամբուլատորիան՝ հիմնական նորոգման կարիք: Համայնքի բոլոր դեղատները գտնվում են բավարար վիճակում:

**Մշակութային հաստատությունները**

Մշակույթի տներ գործում են Ալափարսում, Արզականում, Բջնիում և Կարենիսում: Դրանց դահլիճները գերազանցապես նախատեսված են 200-300 անձի համար, բացառությամբ Բջնու մշակույթի տան, որը կարող է ընդունել մինչև 750 հանդիսական: Ալափարսի և Բջնու մշակույթի տները հիմնանորոգման, Արզականինը՝ ընթացիկ նորոգման կարիք ունեն, իսկ Կարենիսի մշակույթի տունը գտնվում է բավարար վիճակում:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Չարենցավան համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը



**Համայնքի հիմնական կարիքները**

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերի երեք հիմնական առաջնահերթությունները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից[3]: Ավտոճանապարհների վերանորոգումը առաջնային կարևորության հարց է միանգամից երեք բնակավայրերում՝ Ալափարս, Արզական, Բջնի:

Արզականում հրատապ խնդիր է համարվում խմելու ջրի ենթակառուցվածքների ու ոռոգման համակարգի, Չարենցավանում՝ ջրահեռացման ու ոռոգման համակարգերի վերանորոգումը: Չարենցավանում անհետաձգելի է համարվում նաև հիվանդանոցի շենքի վերանորոգումը: Ալափարսում լուսավորվում է միայն կենտրոնական ճանապարհը, և անհրաժեշտ է ներհամայնքային ճանապարհներին ևս լուսավորության համակարգ ներմուծել: Կարենիսում անհրաժեշտ է համարվում նոր մանկապարեզի կառուցումը:

[3] Ֆանտան բնակավայրի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de